կան, և՛ հասարակական, և՛ կուլտուրական կյանքի բոլոր կողմերի մեջ։ Երկու կուլտուրական աշխարհների այդ ներկայացուցիչների միջև եղած տարբերությունների և հակադրությունների այն պայքարը, որը կար XIII դ. սկզբներին, արդեն կորցրել էր նախկին խորությունն ու ընդարձակությունը XIX դ. առաջին քառորդում նաև Զանգեզուրի գավառում, ինչպես և Անդրկովկասի և Հայկական լեռնաշխարհի այլ մասերում։ Ռուսական անմիջական կառավարության հաստատման միջոցներին այս կենցաղային հեղաշրջումը դրսևորված էր սուր և առանձնապես ցայտուն կերպով մանավանդ վիհի այն եզրին, որը բռնած էր նորամուտ տարրը, թուրք-մոնղոլական տարրը։ Այդ պրոցեսին էր ենթարկվել ոչ միայն այս նոր ամուր տարրի կենցաղը, այլև նրա ֆիզիկական կազմվածքը։ Թուրք-մոնղոլական ռասայի համար հատկանշական մարդաբանական (անտրոպոլոգիկ) առանձնահատկություններից շատ չնչին հետքեր էին մնում նրա մարմնի վրա։ Շնորհիվ այն հանգամանքի, որ տեղական աղվան ժողովուրդը իր այն մասով, որը չէր ոչնչացվել կամ դուրս մղվել Մուղանի տափերից թրքական ալիքի հեղեղման ժամանակ, իր մեջ էր լուծել եկվոր տարրը և որ մյուս կողմից՝ թաթար-մոնղոլ ընտանիքները լցվում էին բռնի կամ հոժարակամ ամուսնությունների միջոցով տեղական հարևան ազգություններին պատկանող կենցաղով, թաթարական սերունդները արագ յուրացնում էին էնդեմիկ անթրոպոլոգիկ առանձնահատկությունները։ Թաթար-մոնղոլական ռասայի դեղին գույնը արդեն բոլորովին անհետացել էր և փոխվել էր տեղում իշխող սպիտակագույն տիպի. աչքերի շեղությունը և այտերի բարձր կորությունը վերացել էր, մազոտությունը առատացել և մորուքի, բեղերի ու գլխի մազերի գույնը տեղական գույնից արդեն բոլորովին չէր տարբերվում։ Նրանք չէին արդեն Կիրակոս Գանձակեցուն և նրա ժամանակակիցներին տարօրինակ թվացող և սարսափ բերող «...տեսլեամբ կերպարանաց դժոխատես և ահագնալուր...»[23]։ Մարդաբանները նորագույն հետազոտությունների մեջ ընդգծում են, որ այդ արյունական խաչաձևումից հաղթող է դուրս եկել հին տեղական արմենոիդ տիպը։ Նորամուտ և էնդեմիկ տարրի ֆիզիկական կառուցվածքի մեջ կատարված այս մերձեցումը և կայուն միասնությունը, որը գիտական նոր ուսումնասիրությունների սկզբում գտնում են որպես վերջնականապես ձևավորված պրոցեսի հետևանք, անշուշտ արդյունք է ոչ թե երկու էթնիկ տարրերի վերջին մեկ դարի, այլ արդեն նախորդ վեց հարյուրամյակների համակեցության։ Այն ժամանակաշրջանում իշխող և հրամայող թրքական բոլոր խավերը ռուսական տիրապետության հաստատումից առաջ շատ մեծ չափով էին օգտվում տեղական քրիստոնյա կանանցով իրենց բանուժի պակասը բռնի ճանապարհով անկաշկանդ և ազատ լրացնելու հնարավորությունից։ Դրան աջակցում էր մանավանդ այն, որ Ասիայի խորքերից գաղթելուց հետո տեղում յուրացրած մահմեդական բարոյահասկացողությունը ոչ թե ոչինչ դեմ չուներ, այլ խրախուսում էր իրենց մեջ հնուց սովորություն դարձած բազմակնությունը և այդ միջոցով՝ իսլամի հետևորդների թվի բազմացումը։

Գլխավորապես կանանց միջոցով է, որ կատարվել է նաև նորամուտ տարրի տնտեսական և կենցաղային մերձեցումը էնդեմիկ, տեղացի տարրի հետ։ Կանայք իրենց հետ բերում էին և տնտեսելու, կերակուր պատրաստելու, հագնվելու, մանուկներին կրթելու, ամուսնու հետ վարվելու իրենց ձևերը, իրենց մայրենի երգերն ու եղանակները, հեքիաթները, ավանդությունները, պարերը։

---

[23] Անդ., գլ. 32, էջ 160։